ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 129

20 սեպտեմբերի 2012 թվական

## ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 61.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ (ԾԱԾԿԱԳԻՐ 08-003-0020( ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ և ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 32 հոդվածի 17 կետի և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 15 օգոստոսի 2012 թվականի ( 40-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 20 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 4ա որոշումը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան և Բարեկամության փողոցների հատման խաչմերուկի հարևանությամբ գտնվող առևտրի սրահ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0020( 61.75 քառակուսի մետր մակերեսով հողատարածքի աճուրդային եղանակով 37400 (երեսունյոթ հազար չորս հարյուր( դրամ առավելագույն արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Գայանե Մխիթարյանին և այդ հողամասի նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Գայանե Մխիթարյանի հետ օրենքով նախատեսված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ